

«ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՂԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ

Հաստիքի անվանումը՝ Համապատասխանության հսկողության պատասխանատու
Աշխատավայրը՝ Զվարթնոց օդանավակայան

Հիմնական գործառույթները և պարտականությունները

- օգնել Ընկերության Համապատասխանության հսկողության ղեկավարին համապատասխանության վերաբերյալ Ընկերության քաղաքականությունների և ընթացակարգերի պահպանման հարցում
- մասնակցել համապատասխանության մասին ընթացակարգերի, այդ թվում՝ ֆինանսա-իրավական ուսումնասիրության (Due Diligence) աշխատանքային հանձնարարականների մշակմանը
- աջակցել երրորդ կողմերի ֆինանսա-իրավական ուսումնասիրության (Due Diligence) համապատասխան վերլուծության իրականացման հարցում,
- իրականացնել անկախ հետազոտություն՝ բացահայտելու և գնահատելու համար այն երրորդ անձանց (մատակարարների/հաճախորդների/աշխատանքի համար դիմող թեկնածուների) հետ կապված համապատասխանության մասով հնարավոր ռիսկերը, ովքեր պայմանագրային հարաբերություններ են հաստատում Ընկերության հետ, ինչպես նաև՝ միջոցառումների ծրագրեր առաջարկելու նպատակով
- իրականացնել անկախ հետազոտություն՝ աշխատակիցների միջև հնարավոր շահերի բախումը բացահայտելու ու գնահատելու, կարգավորող գործողություններ առաջարկելու նպատակով
- մասնակցել աշխատակիցների և երրորդ կողմերի համար համապատասխանության վերաբերյալ ուսուցման դասընթացների իրականացմանը
- պատրաստել տեղեկատվություն համապատասխանության առանցքային գործընթացների, նպատակների և ընթացիկ թեմաների մասին՝ Ընկերությունում շրջանառելու համար,
- իրականացված վերլուծության հիման վրա պատրաստել համապատասխանության մասին գեկույցներ

ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

- գերազանց հետազոտական և վերլուծական հմտություններ, համապատասխան օրենքները և կանոնակարգերը մեկնաբանելու կարողություն
- խնդիրների լուծման և վերլուծական մտածողության հմտություններ, համապատասխանությանն առնչվող հարցերը, ռիսկերը բացահայտելու և համապատասխան լուծումներ մշակելու կարողություն

- սեղմ ժամկետներում աշխատելու կարողություն
- անգլերենի իմացության բարձր մակարդակ
- համակարգչային կայուն գիտելիքներ (այդ թվում՝ Word և Excel)
- հաղորդակցության լավ հմտություններ

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓՈՐՁԸ

- համապատասխան ոլորտում (Իրավագիտություն/ Ֆինանսներ/ Տնտեսագիտություն) բակալավրի աստիճան
- 3+ տարվա աշխատանքային փորձ համապատասխանության հսկողության կամ աուդիտի ոլորտում

ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ՝ Բոլոր հետաքրքրված թեկնածուները, ովքեր համապատասխանում են վերոնշյալ հաստիքի պահանջներին, կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրականը hrselection@aia-zvartnots.aero էլ. հասցեին՝ “subject” դաշտում պարտադիր նշելով «**Համապատասխանության հսկողության պատասխանատու**»: